ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2023-2-2-Ա

ք. Երևան 27.02.2023թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2023 թվականի փետրվարի 27-ի նիստում քննարկեց 2022 թվականի հունիսի 28-ին արտոնագրային հավատարմատար Սուսաննա Կնյազյանի կողմից ներկայացված՝ Burger King Corporation ընկերության (5707 Blue Lagoon Drive Miami FL 33126, US) «BURGER KING» (IR1562702) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.
Միջազգային գրանցման մասին ծանուցման մեջ նշված՝ 43-րդ դասի ծառայությունների համար ապրանքային նշանը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան միջազգային գրանցման մասին ծանուցման մեջ նշված 43-րդ դասի ծառայությունների համար, քանի որ այն շփոթելու աստիճան նման է 43-րդ դասի ծառայությունների համար գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետությունում պահպանվող «BURGER KING» (Հասմիկ Գասպարյան, ք. Երևան, Նորքի 9-րդ զանգված, 20 շենք, բն. 10 AM, N 10531, 31.05.2006) բառային ապրանքային նշանին: ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 130-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն համակցված ապրանքային նշաններին նման են համարվում ապրանքային նշանների այն տեսակները, որոնք որպես տարրեր ներառված են ստուգվող համակցված

ապրանքային նշանի մեջ: Տվյալ դեպքում նման տարր է հանդիսանում գրանցված «BURGER KING» բառային ապրանքային նշանը, որն ամբողջությամբ ներառված է հայտարկված համակցված ապրանքային նշանի մեջ:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու և կրկնական փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու վերաբերյալ, քանի որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան միջազգային գրանցման մասին ծանուցման մեջ նշված 43-րդ դասի ծառայությունների համար, քանի որ այն շփոթելու աստիճան նման է 43-րդ դասի ծառայությունների համար գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետությունում պահպանվող «BURGER KING» (Հասմիկ Գասպարյան, ք. Երևան, Նորքի 9-րդ զանգված, 20 շենք, բն. 10 AM, N 10531, 31.05.2006) բառային ապրանքային նշանին: Բողոքարկման խորհրդի նախագահը և մի քանի անդամներ ներկայացրեցին իրենց կարծիքը այն մասին, որ ՀՀ վարչական դատարանը նույն ընկերության «BURGER KING» բառային մաս պարունակող մեկ այլ ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին որոշման դեմ հայցադիմումը բավարարել է՝ վճռում նշելով, որ մերժված և հակադրված ապրանքային նշանները, որոնք ներառում են նույնական «BURGER KING» բառային մասը շփոթելու աստիճան նման չեն:

Փորձաքննության բաժնի փորձագետը նշեց, որ փորձաքննության կայացրած որոշումը իրավաչափ է և հայտարկված ապրանքային նշանը ենթակա է մերժման:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 6-ի N774-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհրդում բողոքների, դիմումների և առարկությունների քննարկման կարգի» 70-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը 6 կողմ և 2 դեմ ձայների հարաբերակցությամբ.

Ո Ր Ո Շ Ե Ց

Արտոնագրային հավատարմատար Սուսաննա Կնյազյանի կողմից ներկայացված Burger King Corporation ընկերության «BURGER KING» (IR1562702)

ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքն ամբողջությամբ բավարարել, կրկնական փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչել և ապրանքային նշանը գրանցել:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ՌԱՖԱՅԵԼ ԳԵՎՈՐԳՅԱՆ